

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպել հետևեալը: «Վաղը, ամսիս 22-ին, կիրակի օրը, առաւօտեան 12 ժամին ս. պատարապից յետոյ, վաղը մայր-եկեղեցում նշանակված է նոյն եկեղեցու նոր երեսփոխանի ընտրութիւնը: Ուստի յիշեալ մայր-եկեղեցու ծր-խական ժողովուրդը հրաւիրում է նշանակված ժամին չնորս լսելու վաղը մայր-եկեղեցին, ընտ-րութեանը մասնակցելու համար:»

Այսպիսով մեզ խնդրում են հետևեալը: «Փե-տրիարի 13-ին տեղիս «Կրօնօթի» դահլիճում կայացաւ մի ներկայացուցիչ հրդեհից վնասվածների օգտին: Ներկայացուցիչ տրվեցաւ հայոց, ուստաց և վրաց լեզուներով և բառական աջող անցաւ: Դահլիճը լի էր: Ներկայացման վերջնականաց յե-տոյ տեղի ունեցան եւրօպական և ասիական պարեր: Աժուճ էր թէ եւրօպական և թէ ասիա-կան երաժշտութիւնը: Ներկայացումից զուտացած արդիւնքը 200 բուրդուց անց է:»

Մեզ խնդրում են ՄՕՍԻՍԱՅԻՑ, որ փետրվարի 8-ին Ռաֆայէլ Պատկանեան աղետելից ուղևորվե-ցաւ կրկին դէպի Նոր-Նախիջևան: Յարգելի բա-նաստեղծը մտադիր է նկարագրել իր ճանապարհ-հորդութիւնը:

ԳՕՐՈՒՅ մեզ հաղորդում են, որ ամսիս 12-ին, վարդանանց տօնի օրը, այդպէսից հայ և վրացի ուսուցիչները համալսմանը, Գորու կլորում ներկայացրին «Շուշանի» ողբերգութիւնը վրա-ցերէն լեզուով մի փոքրիկ հայերէն լեզուով և այնուհետև ոտանաւորներ կարդացին հայերէն և ռուսերէն լեզուով: Ներկայացումից արդիւնքը դո-յացել է մօտ 200 բուրդուց: Դահլիճը կատարելա-պէս լի էր և երկօրեան արդէն անհնարին էր տոմսակ ճարել:

ԲԱՐՈՒՅ մեզ խնդրում են: «Ամսիս 12-ին, վար-դանանց տօնի առթիւ, կայացաւ Բաղուրի դո-մայի դահլիճում պ. Կարա-Մուրզայի երկրորդ խմբիկական կոնցերտը, յօգուտ խմբում մաս-նակցող չքաւոր անդամներին: Կոնցերտը սկսվե-ցաւ երեկոյեան 8 ժամին և վերջացաւ 11 1/2-ին: Դահլիճը համարեա կատարելապէս լի էր և հա-սարակութիւնը մեծ ոգևորութեամբ էր ընդու-նում իւրաքանչիւր կատարած երգը: Պրօգրամը բաղկացած էր 18 երգերից, որոնցից ամենից շատ տպաւորութիւն գործեցին լսողների վրա «Տէր, կեցոյ դհայ», «Եկաւ ժամանակ», «Հան-»

մանոյն իւր Նըլուդի պալատան պարտէզին, արդ եթէ պատասխանը մերժողական լինի, նորին վե-հափառութիւնը պիտի ցաւի և թէպէտ չը պիտի ուզէ զրաւել ընտելութեամբ, մասն զի կայսրը լի-նելով յոյժ լուսաւորեալ և քաղաքակրթութեան պաշտպան, ի հարկէ, նա չուղէր հպատակ ժողո-վրդի մը ստացուածքը գրաւել զինու. դորութեամբ, բայց այսու հանդերձ ցաւ մը կը զգայ և զիսենք թէ Թուրքիոյ մէջ երբ կայսրը ցաւ մը ունենայ ժողովուրդի մը դէմ, նախապարք ու պաշտօնեայք այն ատեն ինքնաբերաբար յոռի աչքով կը նային այդ ժողովուրդին և ընական է որ աղգային զոր-ծերն ալ շատ դէշ ընթանան: Ուրեմն հարկը կը ստիպէ յանձնել զերկամաստունը, բայց պայմա-նաւ որ դոհողութիւն մը համարուի ի սրտիւ: Սուլթանին և օրինակ չը հանդիսանայ ապագային համար:

Երբ-Պէյ խորին սրբազան զլիսաւոր ընդլիսա-բանն հանդիսացաւ. բացատրեց պերճաբաւ լե-զուաւ մը թէ՛ ինչ որ ալ լինին աշխարհական նկատուածները եկեղեցին կարող չէ գոհալի: Բայց այս նկատողութիւններուն ալ հարկ չը մնար ըսաւ, վասն զի փն, Սուլթանը փախաղ չուրի գերեզ-մանոցը գրաւելու: (խորին յուզմունքը պատճառեցին այս խօսքերը), իւր նախադարձներն են, որ այդ փախաղը կը առնեն:

Եւ իւր խօսքերը Նոր-Պէյ սրբազան ուղեց հաս-տատել օրինակներով: Սրբազանը Պէյի լիկայի ե-կեղեցւոյն քարովին է, հետեալաբ աւելի մօտին տեղեակ խնդրին: Պատմեց հետեալ դէպքերն, ոչք մեծ պատիւ մը կը բերեն Սուլթանին ներո-ղաւիտ և քաղաքակրթ զգացմանցին:

Երբ անկաւ առաջ Սուլթանին սննդկապեաններն մին հարկ համարած է քանի տալ զերկոյնստա-տան պատերէն մին, վասն զի այդ պատն, որ կա-պակցութիւն ունի Նըլուդի պարտէզին հետ, ուղ-գակի յարաբերութեան մէջ է սննդկապեաններու:

գիտ իմ անոյշ», «Բաւ է եղբարք», «Բամբ որո-տան»: «Կեցցէ Շապուհ», «Բարե» և «Ահա Հրեշ-տակ»: Խմբի մէջ սօլօ կրողը պ. Վարդիկեան զերկոյնի ձայն ունի, միայն նա ունի նոյն պա-կասութիւնը, որ ունեն մեր բոլոր ասիական եր-գիչները, որոնք բաւ եւրօպական երաժշտական կրթութիւն չեն ստացել. նա կրողն է ք ռ ու մ և բառական որոշ կերպով չէ արտասանում բա-ռերը, որ երգեցողութեան հին դարից յատկա-նիշն է, այն ինչ նոր, մանաւանդ զերմանական երգեցողութեան զարդը պահանջում է երգելիս՝ իւրաքանչիւր բառ և տառ որոշ և սղարդ արտա-սանելու: Վարդիկեանի ձայնը բնականապէս զե-ղեցիկ և զօրեղ միտաբանական հնչիւն ունի, միայն այդ ձայնը զուրկ է զգացմունքից: Խմբի մէջ միւս օրօ կրողը պ. Սուրբանեան (այս անգամ Շահաբան չէր մասնակցում), երևում է թէ մի ժամանակ հրաշալի ձայն է ունեցել.— ուսից և զգացմունքով լի բարիտոն.— բայց այդ ձայնը կար-ծես թէ արդէն կորցրել է այժմ իր ոյժն ու թարմութիւնը, այնպէս որ իր վերջին երգած կը-տորում Սուրբանեանի ձայնը ոչ չուէր արդէն. նրա ձայնը յորիւմ ձայն է երևում խուճը, առ-հասարակ, այս անգամ անհամեմատ աւելի լաւ պատրաստված էր և աւելի լաւ երգից զան նա-խընթաց կոնցերտում: Պ. Կարա-Մուրզա ստացաւ հասարակութիւնից մի չքեղ ընծայ, իսկ Վարդի-կեանին երկատարութեան կողմից ընծայեցաւ մի ժամանց: Չէ կարելի չը դուրի կարա-Մուր-զայի եռանդը և սկզբ դէպի դարձը, որի համար նա մարտնչում է ամեն արդիւնքների դէմ: Գործի համար մեծ հմտութիւն է հարկաւոր և պ. Կարա-Մուրզա ապացուցեց որ կարողանում է յաղթել զժողովութիւնները, կարմակերպելով նոտաներ զրեթէ չխմացող 40 հոգուց մի երգիչի խումբ և կարողանալով սովորեցնել նրանց թէ երաժշտու-թեան սկզբունքները և թէ կանոնաւոր երգեցող-ութիւնը:»

Պատերազմի «Новое Время» լրի է, որ եթէ ծխախոտի միջնախառնութիւնը կընդունի, կ'ս վ-կ աւր, որտեղ ծխախոտի պրոպագանդաները նկա-տելի կերպով շատանում են, դ ու ռ ս կը մը-ն ա յ այդ միջնախառնութեան չըլանից:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ խնդրում են: «Փետրվարի 12-ին այստեղի ուսուցչական խումբը ներկայաց-րեց «Աշակի» և «Եկեղեցի թուղը», յօդուտ թատ-րոնական բեմի, որը նորոգված է: Ներկայացու-մը աղօղ անցաւ. մասնաւոր լաւ խաղաց պ. Ստրաննեան: Դահլիճը կատարելապէս լի էր. դը-

ընակարաններուն հետ Յաջորդ օրը եկեղեցիէն կիմանան եղբորութիւնը և կարգիւնը որ բոլոր-ովին պատը վերցուի: Հարկ կը լինի նորին չի-նել տալ պատը, բայց դրամ չը կայ, մանաւանդ որ այդ պատը չինել տալու համար եղած ծախ-սին ստակը պարտքով ըրած են և տակալին պարտքը չէ վճարուած: Վ.Ե. Սուլթանին իմանա-լով այս եղանակը, կը հրամայէ որ անմիջապէս պատն շինուի իւր անձնական դանձուց ծախիւրը: Այդ եթէ Սուլթանը ուղիւ անպատճառ այդ դե-րեղմանատան տիւրի, ամենին փոյթ չէր ընել որ շինուին պատերը, որով դործն աւելի կը դւարա-նար:

«Ներկորդ» հարկ եղած լինելով չինել մի քանի արտուներ, Սուլթանին հրամայած է իւր ճարտա-բաններէն յոյն Վասիլիսի, յարմար տեղ մը շինել այդ արտուներն: Ու մը, ասի մի ամիս ա-ռաջ, Սուլթանը գիտելով գիտակով մը թէ Բո-պիտի շինուին արտուները, կը տեսնէ որ զերեզ-մանոցին հանդէպ դանձուց պարապ հողին վրայ կը կառուցուին, անմիջապէս կը կանչէ ճարտա-բաններ և կըսէ թէ՛ միթէ վաշտեւ: Է որ զերեզ-մանոցի մը հանդէպ արտու շինուի, և ըստ հրա-մանի վրէ՛. Սուլթանին, կը ըստիւնին հիմեն և կառուցուին ուրիշ տեղ կը փոխադրուին:

Այդ երկու օրինակները մեծ գոհունակութեամբ լուսեցան և ծախախոտի ընդունեցան: Բայց ինչ օգուտ, Գաղ. ժողովը խօսք չէր հա-կընար և այս անգամ նորա աշակցութեան կը հանդէր պ. Ստրաննեան:

Շատ տխուր տպաւորութիւն մը թողեցին այդ մարդու. կեղծ ու պատիւ խօսքերն, իւր հին բարե-կամներն, որք ամենքն ալ չը տալու. կողմն էին, զորած երկու դարձուցին իրմէ: Իւր նոր բարե-կամներն ամենին կարեւորութիւն չէին բնծայի իւր խօսքերուն: Մի մարդ, որ մինչև իսկ կրօնա-մի կը ձեռնար սյուրան տարի, այժմ յանկարծ

րա համար չնորհակալ պէտք է լինել պ. Վ. Տէր-Մկրտչեանից, Ա. Մնացականեանից և Ս. Ա-րտականեանից, որոնք յանձն էին աւել տոմսա-կները վճարուել:

Մեզ խնդրում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ: «Փետրվա-րի 12-ին ս. Քրիստոսի եկեղեցում կատարվե-ցաւ վարդանանց տօնի հանդէսը: Ներկայ էին Աղափրեան եպիսկոպոսը, երկուս զարդաների աշակերտները, աշակերտութիւնները, հոգաբարձու-ները և ուսուցչական խումբը.— իսկ հասարակու-թիւնից, ամօթ է մինչև անդամ տալ.— 20—25 հոգի միայն:»

Այս օրերս թիֆլիսում տպաւորվ է Պարսկա-տանի ուսուցչ նոր դեպքն իրանի Գաղտուկի, որը մեր քաղաքում մի քանի օր մնալուց յետոյ, պէտք է ուղևորվի թիֆլիս:

«Աշակի» № 18-ի մէջ, երկրորդ երեսի, չոր-րորդ էջում, ներքին լուրերի մէջ, վերջից 33-րդ տողում սխալմամբ տպւած է «պատմական հա-նապարհորդութիւններ»,— իսկ պէտք է լինի «պատահական ճանապարհորդութիւններ»:

«Աշակի» անցեալ 18-որդ համարում «Кавказъ» լրագրից արտատպւած լուրը, որը հաղորդում է թէ թուլ է տրված «Ջերմութ մեալիդներն օդ-նոյ ընկերութեան» տուրքը դնել հայոց եկեղե-ցիներում, անճշգրտութեան է պայտանակում, ո-րովհետև, որքան մեղ յայտն է, այդ մասին ԼՂ-միջնից թղթաւորութիւն ստացված չէ:

Ամսիս 19-ին կայացաւ Կովկասեան Գիւղատն-տեսական ընկերութեան արտաքոյ կարգի նիստը, որը շատ բաղմամբ էր: Իշխան Յարգաճէ կար-դաց իր ղեկուցումը, որը վերաբերում է ուսուցչ-գինեգործութիւնը զարգացնելու համար միջնա-րութեան կողմից մշակված միջոցներին: Զեկու-ցումը ընդունվեցաւ ծախախոտի խումբ: Այդ գե-կուցման հետաքրքրիկ էր, որը հաղորդեց միւս անգամ Գիւղատնտեսական ընկերութեան ժողովը այդ մի և նոյն նստում լսեց խորհուրդի Համառու-սական Գիւղատնտեսական ցուցահանդիսի կար-գադրիչ յանձնաժողովի հաղորդագրութիւնը, որով նա խնդրում է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը՝ աջակցել ցուցահանդիսի կազմա-կերպութեան գործին: Ժողովը յանձնեց խորհր-դին մշակել այդ առաջարկութեան վերաբերեալ մանրամասն ծրագիր:

Երբ եկեղեցական աւանդութեանը հակառակ կը շարժէր: Ամին ոք, կըսէր, գիտէ որպիսի դժու-ր շահերու կը ծառայէ այն մարդն, որ իւր կինաց մեծ գործունէութիւնն եղած է հալածել, պարա-ւել, զրպարտել ազգին օգտակար և սիրելի եկե-ղեցականներն ու աշխարհականներն:

Տեսնելով այն խորին արհամարհանքն, յորմէ չըլծապատուէր էր պ. Փափաղեան, սկսաւ մատ-նութիւններ ընել ակն յանդիման: Այդ մարդը Պօլոյ թերթի մը մէջ անդադար կատարածնէ մի քանի երկտասարդ հրապարակագրեր, մի քանի եկեղեցականներ, թէ օտմանեան շահուց հակա-ռակ են, թէ՛ տերութեան դէմ կը դաւեն. վճանայ Պօլոս չիտիսիտուի այդ փաստաբանը, տեսնելով որ խաւարեցաւ իւր աստղը, մասնութեան մէջ կուղէ դայն վերադառնալ փայլեցնել, մինչև ցարդ միայն նոյրիկը եղաւ, առանց արդիւնք մը ունե-նալու: Երբ այդ օրահին մէջ սկսաւ ամբառ-տանել Նոր-Պէյ սրբազանն, այնպիսի անուր դըր-պարտութիւններ և մատնութիւններ ըրաւ. նորա մասին, որ ամեն ոք խորին զրօնանքի պիղծանք զգացին: Պ. Փափաղեան կը յուսայ թէ այդ մատ-նութիւնները կը համարին թերեւ մինչև Սուլթանի ախանջը և Նոր-Պէյ սրբազան կը դատապարտուի արտաբանաց:

Այդքանք լաւ չէ. պ. Փափաղեան կը ջանայ ապացուցանել թէ կաթողիկոսները կարող եղած են ամբողջ զերկոյններն ծախել. ամեն տոմսիւն-ներ կըսէր. այնպէս որ շատերնին իրարու կը հարցնէին թէ՛ հալ ըրկոսանայ մ'է խօսողը թէ՛ մահմադական տաճիկ մը:

Աղաքեղան պ. Մարկոս մը կարող չեղաւ դի-մանալ, ցատկեց արմուէն, ընդմիջեց զարչելի ա-տնաբանին խօսքերն, առանց կարող չնայելու չանթիկ տեղաց պ. Փափաղեանի զլուծաւ: Ամօ-թանալ, դանտիմով, դողողալով կայնած էր պ. Փափաղեան, և Աղաքեղան արմուէնի կերպով

Հին-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ մեզ խնդրում են. «Ե. զիւղի հայ քահանան, որ մտադրվում է դրամանդու-թեան մէջ, այս օրերս ձերբակալվեցաւ և ուղարկ-վեցաւ թիֆլիս:»

Այս տարի աշնան խաբկովում կը կայանայ Հա-մառական Գիւղատնտեսական ցուցահանդէս: Յուզահանդէսը կը բացվի սեպտեմբերի 20-ին և կը շարունակվի մինչև հոկտեմբերի 10-ը, բայց անտանապահութեան բաժնից, որը կը շարունակ-վի միայն մինչև սեպտեմբերի 30-ը: Մեզ ուղար-կած ծրագրից երևում է, որ ցուցահանդէսը բազ-կացած կը լինի ինն բաժնիներով. 1) Անտանա-պահութիւն. ա) ձիաներ, էջեր, ջորներ. բ) տա-ւար. գ) ոչխար. դ) խոզեր. ե) ընտանեկան թռ-չուններ. զ) մեղք. 2) Անտանապահութեան ար-դիւնաբերութիւններ. 3) Հողագործութեան ար-դիւնաբերութիւններ. 4) Աղբակարութեան, բան-ջարանոցի և անտանապահութեան արդիւնաբերու-թիւններ. 5) Գիւղատնտեսական տեխնիկական ար-դիւնաբերութիւններ. 6) Երկրագործական մեքե-նաներ. 7) Տնային արդիւնաբերութիւն. 8) Ար-հեստական կերպով պարարտացնելու նիւթեր, բրածոյ վառելիքներ, աղ. 9) Գիւղական բա-ժին: Այն անձինք, որոնք կամենում են մասնակ-ցել ցուցահանդէսին, պէտք է նախօրը ուղարկեն այդ մասին յայտարարութիւն խաբկովի Գիւղատն-տեսական ընկերութեան խորհրդին ոչ ուշ, քան 1887 թի մայիսի 1-ը:

«Вѣстникъ Европы» ամսագրի մէջ տպւած են Ե շ է Կ Բ Ի Ն Ի Երբ փորձի վէպը. 1) Ангелоче-чебъ, 2) Христова невеста և 3) Сельская учи-тельница: Ռուս հանճարեղ հեղինակ մի բացա-ռական երեւոյթ է կազմում ոչ թէ միայն ուսուցչ-դրամանութեան մէջ, բայց դուրս և եւրօպական ազգերից շատերը դրամանութեան մէջ. վաթսուս տարեկանից անց հասակում, Շէպրինի հանճար ժողովնակ թաւամուտ, հեղհեղաւ աւելի և աւե-լի թարմ է դառնում և ներկայանում է մեղ նոր նոր դրական—զեղարուեստական ձևերի կերպա-րանքով: Այժմ նա սկսել է արդէն վէպիկներ (նո-վէլներ) գրել և շատ աջող կերպով մի և նոյն ժամանակ խիստ ր է ա լ ա կ ա ն ուղղութեամբ, թէ և երբէ չանցնելով դէպի ց ի ն է դ մ, որի մէջ զրոյներից շատերը ընկնում են, կարծելով որ ցի-նիւմը՝ ընտանեկան անհրաժեշտ յատկանիշն է: Առաջին երկու վէպիկները բարձր դասակարգի չըլանցին ևս վերջում իրանց նիւթը, իսկ վեր-ջինը «Գիւղական վարժակ» նկարագրում է մեղ գիւղական մի վարժակ. սրտաշարժ պատմու-

կը նկարագրէր ազգին վիճակն, Հայաստանի ա-ւանդութիւններն: Երբեք տալան ցնցում մը ամեն կողմ կընթանար: Լսած էինք թէ՛ այդ Աղաքե-ղեան երկուն շատ գործեր տեսած է և ժողովուր-դը յուզած է, բայց մենք այն ատեն տղայ էինք և որոշ գաղափար մը չունէինք, իսկ այժմ ամենքս ալ մնացելք խորին տպաւորութեան ներքին: Մենք շատ անգամ առիթ ունեցած ենք ան-նպատակ խօսել պ. Աղաքեղեանի մասին, երբ նա տղայութիւններ կըսէր, բայց այսօր նա վստէ էր բաւել բովանդակ նշանակութեամբ, այն Աղաքեղեան էր, որ երբեմն իւր անձնական չա-հերն ոտնակոխ կընէր իւր աղգային պարտաւա-նութիւնները կատարելու համար: Արդարեւ մեծ միտքաբան մը, մեծ արտաբան մը էր անոնը: Երբեք չէր հայ, որ արժանի է համարանաւ ա-մենամեծ, ամենաքաղաքակրթ ազգերու տար-գրելու երկաթիտանայ մէջ: Եւ ցաւով որ օգտա-կար չը պիտի լինի առաջ բերել պ. Աղաքեղեանի խօսքերն: Այսպիսի ըսեմ որ կրօնը և արիւթիւն՝ ունեցան իրենց անվերջ պաշտպանը:

Ի դուր պ. Ատնապետը կը ջանար լուսնից լա-ճալուրու առնաբանը, ատնապետն ինքն հար-կաղեցաւ լուր:

Որքան երկերն երկեցան այն ատնաբանը, ոչք յետ պ. Աղաքեղեանի սկսան մի քանի խօսք թո-թովի ի նպատակ Գաղաքական Ժողովուրդ: Բայց ե-րբ ժամ տեսած էր վիճաբանութիւնը, յորմու-թիւն ամեն կողմ, հարկ եղաւ մի քիչ զաղար տալ:

Քառորդ ժամ մը հանդիստ առինք. Նորեան էֆենդի և ընկերը դարձանք էին: Այդքան քա-ջութիւն երկաթիտանայ կողմանէ: Ենթ յոտար: Վերադառնալ Ժողովը սկսաւ ձեռք նայն խաղը. ո-մանք կը խօսէին ի պաշտպանութիւն Նորեան էֆենդիի պաշտպանած դատին, ոմանք կը խօսէին ընդդէմ նորա, վերջապէս խորման Հայրիկ խօսք

Մի քանի ամիս սրանց առաջ Պորտուգալիայի հարուստ կալուածատէր Միշաբո ամուսնացաւ մի շատ գեղեցիկ, բայց արեւմտ օրիորդի հետ, որը պատկանում էր մի հին արիստոկրատ անուական տոհմի: Նորերումս այդ գեղեցիկ տիկինը, իբրեւ արեւական, հրաւիրեցաւ պալատը, ներկայ լինելու պալատական պարահանդիսին, բայց առանց իր ամուսնու, որը իր ծագումով չէր կարող ներկայ գտնվել բարձրագոյն պարահանդեսին: Մարդը խնդրեց կնոջից չը գնալ պարահանդէս, բայց գեղեցիկ կինը՝ կամենալով փայլել պալատում, ականջ չը դրեց մարդու խօսքերին և գնաց: Դա իր գեղեցկութեամբ և փայլով մեծ տպաւորութիւն թողեց պարահանդէսի մէջ. շատերը հրճուած էին նրան տեսնելով: Կէս դիշերից անց, տիկինը պարահանդէսից տու՛ն դարձաւ, բայց տան դռները բոլորն էլ փակած էին... Նա տրիպլեցաւ գնալ իր մի բարեկամուհւո՛ւ մօտ և խնդրել նրանից, որ տեղ տայ իրան դիշերեւո՛ւ... բարեկամուհին յանձնեց տիկնոջ մարդու կողմից մի տոմսակ հետեւալ բաժանարարութեան. «Յարգելի տիկին, ես մուտք չունիմ պալատի մէջ, բայց ես իմ տան տէրն եմ և ձեզ իմ պալատի մէջ ընդունել չեմ կամենում. նշանակում եմ ձեզ տարեկան 200,000 ֆրանկ թէպէտ և բաժանուած եմ ձեզանից յաւիտեան...» Այդ անսպասելի բուրբ դարմանք պատճառեց Պորտուգալիայի մայրաքաղաքը բոլոր սաղօններում...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 փետրվարի: Բազմաթիւ շուրջըները և նոյնպէս արտասահմանեան Բօրսաները թոյլ արժամագրութեան պատճառով այստեղ մուրհանգիսի կուրսը, նկատելի կերպով ընկաւ, — Լոնդոնի վրա 21 1/2, Բեռլինի վրա՝ 182 1/2, Փարիզի վրա՝ 227, Եւրոպայի 9 ր. 14 կողմէ:

ՍՈՖԻԱ, 18 փետրվարի: Վարնայի և Շուսկայի բերդապահ զօրքերը կը մօտենան Սիւրաբիային, ինչպէս երևում է, վաղը: Սիւրաբիայի բերդապահ զօրքը բաղկացած է 900 մարտական և 2,000 պահակաւորի: Կնիստըրում են, որ Շուսկայի ապստամբութեան կողմը կանգնի. Վարնայի ազգաբնակիչները դեռ տատանվում է. ամենից հաւանականն այն է, որ ապստամբական շարժումները կը տարածվեն:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 փետրվարի: «Тражданинъ» հաղորդում է, որ Սիբիրի համալսարանի հարցի համար կազմված յանձնաժողովը որոշել է հետեւեալը. — համալսարանը կուշի ոչ թէ Սիբիրի, այլ Տօմսկի համալսարան, և վճել է առ այժմ բա՛նալ միայն բժշկական ֆակուլտետ:

ԲԵՐԼԻՆ, 19 փետրվարի: Առ այժմ յայտնի են միայն 24 չրջանները կրկնաբուհներին հետեւանքները, ընտրված են երեք պահպանողականներ, մի անդամ պետական կուսակցութեան, չորս ազգային աղատամիտներ, կինստոնի երկու անդամ, տասն ազատ-մտածողներ, և չորս սօցիալ-լիստներ: Բերլինի բոլոր չորս չրջաններում էլ որտեղ կատարվեցան կրկնաբուհներին ընտրված են ազատ-մտածողներ:

ՍՈՒԿՈՒՄ, 19 փետրվարի: Առաջ յոգովը մերժեց այն առաջարկութիւնը, որով ուղում էին շատացնել հայահառնիկները վրա մաքսային տուրքը՝ իւրաքանչիւր հարկւր կիլոգրամին 2 կոսն:

ՍՈՖԻԱ, 19 փետրվարի: Բուսնիսի գաղթած մի քանի բազմաթիւ սպաներ եկան Սիւրաբիա, և իրանց կողմնակիցները օգնութեամբ տիրեցին ամրոցը: Նրանց դէմ զօրք է ուղարկված:

ԲՈՒԿԱՐԵՍ, 19 փետրվարի: Լուրերն են յայելով, Լոմ-Պալանկայի, Շուսկայի և Պելիւնայի բերդապահ զօրքերը ապստամբիցան լինամակալութեան դէմ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 փետրվարի: Ապստամբական պատգամաւորները յոգովի բխովեցային յանձնաժողովին պատերազմական և արտաքին գործերի միւնիստրները լրացատրութիւններ տուելոյն, սպառնալովութեան համար յոգովից պահանջված փոխառութեան աւելիւմը: Պատերազմական միւնիստրը ասեց, որ նախագծած միջոցները չնորհով, աւելի հեշտ կը լինի սպառնալովութիւնը զըլուս բերել, կրճատել այդ բանի համար կողմ ծախսերը, և համարել պատերազմական նպատակներին: Արտաքին գործերի միւնիստրը մատնանել արեւ այն բանի վրա, որ ոչ բազմաթիւ հարկեցը, որ այժմ երկրորդական տեղ է բռնում, և ոչ էլ կապարկութեան քաղաքական դրութիւնն է, որ վտանգ են սպառնում. վտանգ սպառնացողը ընդհանրապէս Եւրոպայի դրութիւնն է, և արեւմտեան ու արեւելեան հարցերը պարբերաբար հան-

դէս գալը: Գրանով էլ պայմանաւորվում են և սպառնալովութիւնները, որոնք, այնու ամենայնիւ, լոկ պաշտպանողական բնաւորութիւն ունեն:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 փետրվարի: Այսօր Պետերբուրգի բորսայում կայացաւ վաճառականների ժամատկ կառուցված՝ Կայսր Ալեքսանդր II-ի կիսարձանի բացումը: Հանդիսին ներկայ էին Կայսերական Ընտանիքի անդամները, միւնիստրները, միւնիստրների օգնականները, քաղաքագլուխը, քաղաքային վարչութիւնը և բորսային վաճառականութիւնը իրանց ընտանիքներով: Կիսարձանը շինված է սպիտակ մարմարից, ակադեմիկոս Զիմովի ձեռքով:

ԿԻՆՈՎ, 19 փետրվարի: Արդէն քանի մի օր է որ Եւրոպայիսկու շաքարի գործարանը այրւում է: Եփուկութիւնը ապահոված է 600,000 ռուբլի գումարով, իսկ շաքարը 400,000 ռուբլի գումարով: միւնիստրի կաբլը դեռ յայտնի չէ:

ԲՈՒԿԱՐԵՍ, 19 փետրվարի: Ապստամբութիւնը Սիւրաբիայում ճնշված է, բայց աւելի վտանգաւոր ապստամբութիւն յայտնվեցաւ Բուսնիսում: Առաւօտից սկսած Դուրմեյովում լուրում է այնտեղից հրացանաձգութիւն: Կարծում են որ Սիւրաբիայի ապստամբութիւնը մի միջոց էր միւսին, որպէս զի կառավարչական զօրքերը հեռացվին Բուսնիսից, որը ապստամբների համար Սիւրաբիայից աւելի նշանակութիւն ունեցող մի կէտ է: Ուրիշ տեղեկութիւններն են, որ Սիւրաբիայի ապստամբված քաղաքապահ զօրքերը դուրս եկան քաղաքից կառավարչական զօրքերին հանդիպելու համար, որոնք Շուսկայից և Բուսնիսից էին ուղարկված: Թաթար-Բաղաբիկի մէջ նոյնպէս ապստամբութիւն է ծագել:

ԲՈՒԿԱՐԵՍ, 19 փետրվարի: Էմիրը տարածեց մի չրջարկական, որով կանչում է իր հպատակներին արշաւանքին պատրաստվելու, ինչպէս և նախադրում են ուսանելի դէպք: Մարտի 10-ից մինչև 18 կը սկսի զինուորագրութիւնը և կը կայանայ գորահանդէս:

ԲԵՐԼԻՆ, 19 փետրվարի: Այսօր կայացաւ շուրջըներաւոր բացումը, թէ և կրկնաբուհներին ընտրված չրջաններում դեռ ևս վերջացած չէ: Այդ հանգամանքը տեղիք տուեց լուրերի դիմադր կուսակցութեան կողմից: Բայց Բեռլինի միւնիստրը և ազգային-ազատամիտ կուսակցութեան առաջնորդը յայտնեցին որ պէտք է չը նորհակալ լինել կառավարութեանը, որ նա ներկայ արտակարգ հանգամանքներում չտուպեց գումարել պարլամենտը: Պարլամենտի բացմանը կարգադրված դահական ճաշը մասնաշրջաց է անում, որ Գերմանիայի արտաքին քաղաքականութիւնը անշուք կերպով ուղղված է դէպի խաղաղութեան պահպանմանը բոլոր պետութիւնների հետ, բայց մասնաւոր հարեան պետութիւններին հետ, և որ այդ խաղաղութեան քաղաքականութեանը պարլամենտը աւելի էլ կը նըպաստի, թէ էլ կը քուէարկէ զօրքի թիւը աւելացնելու նախադիմը, որ մերժվեցաւ արձակված պարլամենտի կողմից:

ՎԻԵՆՆԱ, 19 փետրվարի: Ռուսաց դեսպան իշխան Լորանով-Բոտոմսկի կարճ ժամանակով արձակուրդ է վերցրել և ուղարկվում է Պետերբուրգ:

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ՀԻՆՆԱՍԻԱՆՆԵՐ, Կարագետ Օհանովին: Գուրդարմանում էր որ «Մշակը» ձեռք ուղարկվում է, բայց մինչ օրեանք ձեռնարկը, Արաւելից ներկայ թիւի, յունարկ 10-ից ձեռք ձեռքով գրած նամակը, որի հետ գուրդ լինեցող ուղարկել էր մեղ 10 ռուբլի և կրել էր հետեւեալը: «Յարգելի խնամիր, նամակովս ուղարկում եմ ձեզ տու՛ն ռուբլի և խնդրեմ անտես չառնէք ուղարկել ինձ ձեր պատական «Մշակ» լրագիրը հետեւեալ հասցեով. Нахичевань (Эрив. губ.) Карапету Оганову.» Հիմա, ինչպէս է պատահել որ դարձմանում էր թէ ինչի «Մշակը» ձեռք ուղարկվում է: Զարմանալ մնաց իրաւունք ունենալ, և ոչ թէ գուրդ, հայը ինքն նամակով լրագիր խնդրել, հայը փող տայ, — ու յանկարծ մտանայ... Եւ չը մտանայ, պարան, որ «Մշակի» խմբագրութիւնը ոչ արեւելէ ուղարկում իր թիւերը, առանց որ մարդ ինքն խնդրի: Բայց ամենից դարմանալին այն է որ գուրդ լինեցող ձեռք անտեսով ստորագրված նամակում փող էլ էր ուղարկել մեղ, ու յետոյ դարմանում էր ինչի ձեռք անտեսով «Մշակը» ուղարկվում է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒՂՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԱԿԵՒԵՒ ԵՒ ԸՆԿ. (N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթեւեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորքըշարթի, մարտի 4-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շողնաւոր, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւններն մասին պէտք է դիմել ընկերութեան գործախոյններին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնիսին, նախկին Արծալունի գաղթեւում, № 103.

25—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами в Тифлисе (Графская ул., против Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՐԾ ՀԱՍՏԱՏԱՍ ԿՈՎԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆԲՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաքանկա փողոց, Մուշէի դիմաց):

Ստացված է՝ Մալց-Էկստրակտ և հաղի համար կոնֆեկաններ «Մի հաղի»: Չկան իւր մաքրած և ոչ-մաքրու. Պրոմանի ձեթ, քաղախի է սէնցիա, բուսական ձեթ, ԲԵՐԹԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՆ ԱՆԳԼԻԱՆԱՆ ՕՍԼԱՅ, լեղակ՝ փոշիով և դոշտերով. բծեր հանելու դեղեր, կոշիկները և վէսնիճ կոշիկների համար. սամալարը և առհասարակ միտալեայ գործիքները սրբելու իւր և փոշի: ԵՎԵԿԱՆԱՆ ԳՐԵՏԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅԻ, և անասութեան ուրիշ պարագաներ: Լէնգլի թխտեւում քաղաքում. թխտեւում կրէմ. է մուսկա և վաշլանովի օսմե տիակաւ սրբիչներ, երեսի և մորթու թարմութիւնը պահպանելու համար: Կինոնէնի Լէնգլաւ մազերը սնդրացնելու համար: Կեղանային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒԻ նրա բաժանմունքում:

Մարտի 1-ի վիճակահանութեան համար

ԵՂԱՐՔ ՆՈՎԻՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Սիճի փողոց, քարվանսարայ Անանովի)

ՎԱՃԱՌՈՒՄ է խաղաղամասերը II փոխառութեան և փոխ է տալիս նոցա գրաւականով

210 ՐՈՒԲԼԻ:

ԱՊԱՀՈՎԱՅՆՈՒՄ է 50 կօլ. համար: 10 տոմսակից աւելին 45 կօլ. ՀԱՏՐ: 20 տոմսակից աւելին 40 կօլ. ՀԱՏՐ:

4—8

Մի երեսասարդ՝ որ վեց տարի շարունակ ուսուցչութիւն է արել հայոց զարգացնելու, յանձն է առնում աշակերտներն պատրաստել հայոց լեզուից, թարգմանութիւնից, երգեցողութիւնից և ծիսական զարգացնելու աւանդելի բոլոր առարկաներից: Պայմանների մասին հարցնել «Մշակի» խմբագրատանը:

ԿՕՔԻ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՌԻ Ե ԸՆԿ. (II, 4907) 50—50 (2)

ԹՈՅՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՋՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Melange.

Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափուկութեամբ: Գինը 2 ր. սրտակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուսուցչելու, ֆրանսերէն և գերմաներէն լեզուի:



Բաղաւոր—Eugénie. Գալինեա և պատկի փունջի ծաղիկները, երեսին, չլինքին և ձեռքերին քնքշուած լինելու և փայլելու, նոյնպէս և մարմարիծնի սպիտակութեան տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյն պէս կաշու անհարթութիւնը և բիծերը օճալացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսուցչելու, ֆրանսերէն և գերմաներէն լեզուի:

Կարմալեղ—Eugénie. Տեղուկ թափուկ և ականջներին բնական վարդի դոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբում երեսի քրտնից: Առաջարկվում է մանական թափոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսուցչելու, ֆրանսերէն և գերմաներէն լեզուի:

Այդ բոլոր երեք կոսմետիկական արդիւնքները թշխական վարչութեան վկայութեամբ, չեն պահանջում իրանց մէջ որ և է նշատակար նիւթեր:

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՏԱՍ ՊՈՄԱՒ

Խակական «Pasta Eugénie», դերադանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անհարթ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկտաւարական թարմութիւն և զեղեցկութիւն: Գինը մի սրտակի համար 1 ր. 60 կ.

Բինի-գլիցերինեան պոմադ պերուական բաղաւոր, մազերը սնդրացնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրտակի համար:

Ձեռքերի պոմադ: Գինը սրտակի համար 1 ր. 30 կ.: Խաղաքանչիւր սրտակի վրա գտնվում է պաշտպանողական գրոշմ, մի «Բեռնիս» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Խակական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի վրա՝ 50 կ. առանց վրձնի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բուրձնի. Գ. արկղիկի 3 ր. ներկը «Բիս Գոտմանի» գործարանին:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնա կի զեղանային ապրանքների մագազինում, «Լոնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

84—100

Ստացվել են ՇԵՐԱՄԻ ցելուէր սերմերը ՅՐԱՆՍԻԱՅԻՑ: Այդ սերմերը երկու ամենատառաջ տեսակից են և ամենից բաւ են դիմանում Կովկասի կլիմային:

Երաշխատւում եմ որ իւրաքանչիւր 20 ԼՕՏԵԿԻՑ ստացվելու են մօտաւորապէս 10 30 ԼՕՏԵՑ զեղեցիկ բօժոժ:

Որպէս նմուշ՝ զօրանիլը (մսկալ) ծախվում է 50 կօլեկով:

Փօստով ուղարկվում է յանկացողներին: Փօստի ծախսը առնողի վրա է:

ԼԵՐԻՍԵ, Թիֆլիս, Նաորոնայա փողոց № 10 Ալեքսանդր Բրիլյոնովի տանը (Սօլոյակ):

3—3

ՄՕԶԻՕԻԿ ՀԱՅՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ Համար հարկաւոր է ՄԻ ՏԻՐԱՅՈՒ, որը խմանայ ԵՐԴԵՂ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ: Մանրամասնութիւնները խմանալու համար դիմել «Մշակի» խմբագրատանը, ոչ աւելի ուշ քան մինչև ներկայ փետրվար ամսին 13-ը:

3—3